ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ, ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼ – 2018
9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ
ՀԱՐՑԱՏՈՄՍ – տևողությունը՝ 150 րոպե

I. ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ (15 միավոր)

1) «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (9 միավոր)

ա. Նշել ճիշտ պատասխանը: (0,5 X 6 = 3 միավոր)

1. Ե՞րբ է Պարույր Նահապետը թագավոր հռչակվել:

ա) Ք. ա. 612 թ. բ) Ք. ա. 609 թ. գ) Ք. ա. 605 թ. դ) Ք. ա. 585 թ.

2. Տիգրանակերտի ճակատամարտում հռոմեական զորքի հրամանատարն էր՝

ա) Պոմպեոսը բ) Լուկուլլոսը գ) Կրասոսը դ) Անտոնիոսը

3. Խոսրով III Կոտակին հաջորդեց իր որդին՝

ա) Տիրանը բ) Արշակ II-ը գ) Արշակ III-ը դ) Խոսրով IV-ը

4. Հայոց ո՞ր իշխանի օրոք Միսը հռչակվեց Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք:

ա) Թորոս I բ) Լևոն I գ) Թորոս II դ) Մլեհ

5. Ե՞րբ Արցախի մելիքությունները սկսեցին անվանվել Խամսայի մելիքություններ:

ա) 1722 թ. բ) 1728 թ. գ) 1736 թ. դ) 1747 թ.

6. Ս. Վրացյանի կառավարությունը կազմվեց՝

ա) 1920 թ. նոյեմբերի 23-ին գ) 1920 թ. նոյեմբերի 27-ին
բ) 1920 թ. հոկտեմբերի 23-ին դ) 1920 թ. նոյեմբերի 30-ին

բ. Լրացնել կամ գրել պատասխանները: (1 X 3 = 3 միավոր)

1. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ: *(1 միավոր)*

ա) Ծոփքի վերամիավորումը Մեծ Հայքի թագավորությանը
բ) Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրումը
գ) Մեծ Հայքի Երվանդունյաց թագավորության անկումն ու Սելևկյանների գերիշխանության հաստատումը Հայաստանում
դ) Գառնիի տաճարի կառուցումը
ե) Տրդատ I-ի թագադրումը

1	2	3	4	5

2. Համապատասխանեցնել Վանի թագավորության արքաների անուններն ու նրանց գահակալման տարիները: *(1 միավոր)*

1. Արգիշտի I	ա. Ք.ա. 835 – 825 թթ.
2. Ռուսա II	բ. Ք.ա. 825 – 810 թթ.
3. Սարդուրի II	գ. Ք.ա. 810 – 786 թթ.
4. Մենուա	դ. Ք.ա. 786 – 764 թթ.
5. Սարդուրի I	ե. Ք.ա. 764 – 735 թթ.
	զ. Ք.ա. 685 – 645 թթ.

1	2	3	4	5

3. Համապատասխանեցնել հեղինակների և նրանց ստեղծագործությունների անունները:

(1 միավոր)

1) Հովսեփ Գաթըրճյան
2) Միքայել Չամչյան
3) Սերգեյ Գլինկա
4) Մաղաքիա Օրմանյան

ա) «Հայոց պատմություն»
բ) «Հայ ժողովրդի պատմության տեսություն»
գ) «Տիեզերական պատմություն»
դ) «Քննական պատմություն հայոց»
ե) «Ազգապատում»

1	2	3	4

գ. Լրացնել կամ գրել պատասխանները: (3 միավոր)

1. Տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ: Ընտրել երկու պատասխան:

(0,5 X 2 = 1 միավոր)

ա) Պարույր Նահապետը դաշինք կնքեց Մարաստանի և Աքեմենյան տերության հետ՝ ընդդեմ Ասորեստանի:
բ) Բաբելոնիայում Դարեհ I-ի դեմ բարձրացած ապստամբությունը ղեկավարում էր հայազգի Արախան:
գ) Ալեքսանդր Մակեդոնացու ստեղծած հսկայածավալ պետության մայրաքաղաք դարձավ Ալեքսանդրիա քաղաքը Եգիպտոսում:
դ) Ք.ա. 93 թ. Տիգրան Մեծի զորքերը գրավեցին և Հայոց թագավորությանը միացրեցին Կապադովկիան:
ե) Տիգրանակերտ մայրաքաղաքից բացի նույն անվանումով քաղաքներ են հիմնադրվել նաև Տիգրան Մեծի տերության այլ վայրերում, այդ թվում՝ Արցախում:

2. Համապատասխանեցնել աշխատությունների և հեղինակների անունները.

(1 միավոր)

1) «Աղվանից աշխարհի պատմություն»
2) «Աղանդների հերքումը»
3) «Իմաստասիրության սահմանումը»
4) «Պատմություն»
5) «Աշխարհացույց»

ա) Դավիթ Անհաղթ
բ) Սեբեոս
գ) Պարույր Հայկազն
դ) Մովսես Խորենացի
ե) Մովսես Կաղանկատվացի
զ) Եզնիկ Կողբացի

1	2	3	4	5

3. Տրված բացատրություններից որո՞նք են սխալ: Ընտրել երկու պատասխան:

(0,5 X 2 = 1 միավոր)

ա) Հայաստանի Հանրապետության զինանշանի հեղինակներն են ճարտարապետ Հովհաննես Քաջազնունին և նկարիչ Հակոբ Կոջոյանը:

բ) 1919 թ. հունվարին Փարիզում բացված խաղաղության խորհրդաժողովում Հայաստանի և հայ ժողովրդի շահերը ներկայացնում էին Հայաստանի Հանրապետության կառավարության և արևմտահայերի պատվիրակությունները՝ Ավետիս Ահարոնյանի և Պողոս Նուբար Փաշայի գլխավորությամբ:

գ) 1920 թ. ապրիլի 25-ին արցախահայության 9-րդ համագումարը որոշում կայացրեց Լեռնային Ղարաբաղը Հայաստանի Հանրապետությանը միավորելու մասին:

դ) 1920 թ. ապրիլին Իտալիայի Սան Ռեմո քաղաքում կայացած խորհրդաժողովում վերջնականապես մշակվեց Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագիծը:

ե) Հայ-ռուսական հարաբերությունները կարգավորելու նպատակով 1920 թ. մայիսին Մոսկվա մեկնեց ՀՀ պատվիրակությունը խորհրդարանի փոխխոսնակ, գրող Նիկոլ Աղբալյանի գլխավորությամբ:

զ) 1920 թ. նոյեմբերի 25-ին Ալեքսանդրապոլում սկսվեցին թուրք-հայկական հաշտության բանակցությունները:

2) «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (6 միավոր)

ա. Նշել ճիշտ պատասխանը: *(0,5 X 4 = 2 միավոր)*

1. Ե՞րբ են անցկացվել առաջին օլիմպիական խաղերը:

ա) Ք. ա. 782 թ. բ) Ք. ա. 778 թ. գ) Ք. ա. 776 թ. դ) Ք. ա. 753 թ.

2. Ո՞ւմ օրոք քրիստոնեությունն ընդունվեց որպես Հին Ռուսիայի պետական կրոն:

ա) Օլեգ բ) Վլադիմիր գ) Սվյատոսլավ դ) Յարոսլավ Իմաստուն

3. Ե՞րբ ավարտվեց Հարյուրամյա պատերազմը Անգլիայի և Ֆրանսիայի միջև:

ա) 1444 թ. բ) 1445 թ. գ) 1453 թ. դ) 1461 թ.

4. Ե՞րբ ընդունվեց ԱՄՆ-ի Սահմանադրությունը:

ա) 1776 թ. բ) 1787 թ. գ) 1789 թ. դ) 1794 թ.

բ. (0,5 X 4 = 2 միավոր)

1. Պատմական իրադարձությունները դասավորել ըստ դրանց ժամանակագրական հաջորդականության: *(0,5 միավոր)*

ա) Դուքս Վիլհելմի հռչակվելը Անգլիայի թագավոր

բ) Լեյֆ Էրիկսոնի կողմից գաղութի հիմնումը Հյուսիսային Ամերիկայում

գ) Կոստանդնուպոլսի համալսարանի բացումը

դ) Երուսաղեմի գրավումը խաչակիրների կողմից

ե) Ինկվիզիցիայի ստեղծումը

զ) Քրիստոնեական եկեղեցու երկրորդ մեծ բաժանումը

1	2	3	4	5	6

2. Կատարել համապատասխանեցում: *(0,5 միավոր)*

1) Օկտավիանոս Օգոստոս	ա) «Պետության կառավարման մասին» աշխատության ստեղծումը
2) Մարկոս Կրասոս	բ) Պրինցիպատի ստեղծումը Հռոմում
3) Անտիոքոս III	գ) «Քաղաքացիական իրավունքի հավաքածուի» կազմումը
4) Հուստինիանոս I	դ) Խառանի ճակատամարտը
5) Կոստանդին VII Ծիրանածինի	ե) Մանազկերտի ճակատամարտը
	զ) Մագնեսիայի ճակատամարտը

1	2	3	4	5

3. Պատմական գործիչների անունները դասավորել ըստ նրանց գործունեության ժամանակագրական հաջորդականության: *(0,5 միավոր)*

ա) Նապոլեոն I
բ) Ֆրիդրիխ II
գ) Չարլզ I
դ) Լուի Ֆիլիպ
ե) Պյոտր I

1	2	3	4	5

4. Կատարել համապատասխանեցում: *(0,5 միավոր)*

1) Վիկտոր Հյուգո	ա) երաժշտություն (Գերմանիա)
2) Ռիխարդ Վագներ	բ) գրականություն (Ֆրանսիա)
3) Օգյուստ Ռոդեն	գ) քանդակագործություն (Ֆրանսիա)
4) Էդգար Դեգա	դ) գրականություն (Անգլիա)
5) Բերնարդ Շոու	ե) երաժշտություն (Իտալիա)
	զ) կերպարվեստ (Ֆրանսիա)

1	2	3	4	5

գ. (1 X 2 = 2 միավոր)

1. Տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ: Ընտրել երկու պատասխան: *(0,5 X 2 = 1 միավոր)*

ա) 1791 թ. սեպտեմբերին Ֆրանսիան հռչակվեց հանրապետություն:
բ) 1813 թ. Լայպցիգի ճակատամարտում դաշնակիցները պարտության մատնեցին Նապոլեոնի բանակին:
գ) Աբդուլ Մեջիդ սուլթանը 1826 թ. վերացրեց ենիչերիների զորաբանակը և ստեղծեց եվրոպական ձևով զինված ու կազմակերպված կանոնավոր զորքեր:

դ) 1857 թ. Հնդկաստանում սկսվեց անգլիական գաղութարարների դեմ ժողովրդական հզոր ապստամբությունը:

ե) «Ափիոնի» պատերազմներն ավարտվեցին Չինաստանի պարտությամբ, որը հարկադրված էր անիրահավասար պայմանագրեր կնքել ոչ միայն Մեծ Բրիտանիայի, այլև Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի ու Ճապոնիայի հետ:

2. Տրված բացատրություններից որո՞նք են սխալ: Ընտրել երկու պատասխան:

(0,5 X 2 = 1միավոր)

ա) 1919 թ. հունվարին Փարիզում բացված հաշտության խորհրդաժողովում գերիշխող դեր ունեին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ը, Ավստրո-Հունգարիան և Ճապոնիան:

բ) Ազգերի լիգայի գլխավոր մարմինների նստավայրը Ժնև քաղաքն էր (Շվեյցարիա):

գ) ԱՄՆ-ի տնտեսությունը ճգնաժամից դուրս բերելուն ուղղված «Նոր կուրս» անվանումով ծրագիրը մշակվեց և սկսեց իրագործվել 1929 թ. նախագահ Հ. Հուվերի օրոք:

դ) Խորհրդային Միությունում առաջին հնգամյա պլանի իրականացումը սկսվեց 1928 թ.:

ե) 1940 թ. հունիսին գերմանական բանակը մտավ Փարիզ, Ֆրանսիան անձնատուր եղավ:

II. ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱԶԱՏ ՇԱՐԱԴՐԱՆՔՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ (5 միավոր)

1.Ներկայացնել Հայաստանի առաջին հանրապետության իշխանության մարմինների ձևավորումը.

- *իշխանության մարմինների ստեղծումը,*
- *ազգային բանակի ստեղծումը,*
- *պետական խորհրդանիշները:*

(2,5 միավոր)

2.Ներկայացնել Փարիզի վեհաժողովը և նոր աշխարհակարգի ձևավորումը.

- *Փարիզի հաշտության վեհաժողովը,*
- *Վերսալ-վաշինգտոնյան համակարգը:*

(2,5 միավոր)

Է. Մինասյան
Պատմության հանձնաժողովի նախագահ,
պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր

06.03.2018 թ.